



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

քաղաք Հրազդան

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թ.

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍԻՏ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Սեվակ Միքայելյանը, Մերի Տոնոյանը, Խաչիկ Մուրադյանը, Արտեմ Ստեփանյանը, Անդրանիկ Բաբայանը, Սուսաննա Կարապետյանը, Լուսինե Հակոբյանը, Արա Հարությունյանը, Գինեվան Ղազարյանը, Գեվորգ Գյուրջյանը, Գեվորգ Դավթյանը, Արշավիր Խաչատրյանը, Գոհար Հակոբյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Գուրգեն Հակոբյան, Արեվիկ Եփրեմյան, Գարիկ Հակոբյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարուժան Սաֆարյանը

Նիստը արձանագրում էր բաժնի պետ՝ Արևիկ Եփրեմյանը

ԼՍԵՑԻՆ

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի N 11
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍԻՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1. Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 15-ի N 11 արտահերթ նիստի օրակարգը.

- 1) Մրցութային հանձնաժողով ստեղծելու և Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 6-ի N55 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,
- 2) Քարտեզագրման անճշտության հետևանքով քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամասերը Հրազդան համայնքի սեփականություն ճանաչելու մասին,
- 3) «Հրազդանի «Մայրական անկյուն» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու, կազմակերպության կանոնադրությունը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,
- 4) Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 10-ի N 97, 98, 99, 100 և 2025 թվականի հուլիսի 15-ի N117 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին,
- 5) Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և

- սանմաքրում» հիմնարկը անվանափոխելու և Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 14-ի N58 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
- 6) Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի N 200 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
- 7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 18-ի N 143 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,
- 8) Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի N 201 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,
- 9) Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի N 202 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
- 10) Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի N 203 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,
- 11) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի N 220-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 132)

ԼՍԵՑԻՆ

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՐԱՋԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-Ի N55 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.
 - 1) Վարուժան Սաֆարյան՝ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,
 - 2) Ռոբերտ Դանիելյան՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,
 - 3) Գուրգեն Հակոբյան՝ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ,
 - 4) Արևիկ Եփրեմյան՝ համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,
 - 5) Տիգրան Նավասարդյան՝ Հրազդան համայնքի ղեկավարի խորհրդական,
 - 6) Լուսինե Զաքարյան՝ համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ,
 - 7) Աշոտ Ասրյան՝ համայնքի ավագանու անդամ,
 - 8) Անի Ղազարյան՝ համայնքի ավագանու անդամ:
2. Աճուրդավար նշանակել Վարուժան Սաֆարյանին:
3. Արձանագրող նշանակել Լուսինե Զաքարյանին:
4. Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 6-ի

«Մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին» N 55 որոշումը:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 133)

ԼՍԵՑԻՆ

**ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ԱՆՃՇՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀՐԱՋԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 1831-Ն որոշմամբ, 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման N1 հավելվածով.

- 1.Քարտեզագրման անճշտության հետևանքով, որպես քաղաքացիների սեփականություն փոխանցված հետևյալ հողամասերը ճանաչել Հրազդան համայնքի սեփականություն.
1) Հրազդան քաղաքի Վերին Աղբյուրակ այգեգործական զանգվածում գտնվող 0.03792հա մակերեսով (ծածկագիր՝ 07-001-0099-0147),
2) Հրազդան քաղաքի Զրառատ թաղամաս 7 հասցեում գտնվող 0.00645հա մակերեսով (ծածկագիր՝ 07-001-0194-0007),
3)Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Տ.Պետիկյան փողոց 8/1 հասցեում գտնվող 0.00927հա մակերեսով (ծածկագիր՝ 07-001-0625-0038),
4)Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 5-րդ փողոց 14/1 հասցեում գտնվող 0.0013հա մակերեսով (ծածկագիր՝ 07-001-0509-0090-ից):
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 134)

ԼՍԵՑԻՆ

**«ՀՐԱՋԴԱՆԻ «ՄԱՅՐԱԿԱՆ ԱՆԿՅՈՒՆ» ՄՍՈՒՐ - ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկ. ԳԱՐԻԿ ՀԱԿՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Հիմնադրել «Հրազդանի «Մայրական անկյուն» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ Կազմակերպություն):
2. Հաստատել «Հրազդանի «Մայրական անկյուն» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
3. Հաստատել «Հրազդանի «Մայրական անկյուն» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը՝ համաձայն N 2 հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 135)

ԼՍԵՑԻՆ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 97, 98, 99, 100 ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N117 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Դեկլարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով.

1. Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ավագանու հետևյալ որոշումները.

- 1) 2025 թվականի հունիսի 10-ի «Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկը անվանափոխելու և Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 14-ի N58 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 97,
 - 2) 2025 թվականի հունիսի 10-ի «Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի N 200 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 98,
 - 3) 2025 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 18-ի N 143 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 99,
 - 4) 2025 թվականի հունիսի 10-ի «Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի N 201 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 100,
 - 5) 2025 թվականի հուլիսի 15-ի «Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 10-ի NN 97, 98, 100 որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 117 որոշումները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը և տարածվում է 2025 թվականի հուլիսի 15-ից հետո առաջացած իրավահարաբերությունների վրա:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 136)

ԼՍԵՑԻՆ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆՄԱՔՐՈՒՄ» ՀԻՄՆԱՐԿԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ

ՀՐԱՁԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N58 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. ԳԱՐԻԿ ՀԱԿՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 28-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. «Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղքատաօգնություն և սանմաքրում» հիմնարկը» անվանափոխել «Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն» հիմնարկ»:
2. Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 14-ի «Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Աղքատաօգնություն և սանմաքրում» բյուջետային հիմնարկի հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը և կանոնադրությունը հաստատելու մասին» N58 որոշման N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի օգոստոսի 18-ից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 137)

ԼՍԵՑԻՆ

ՀՐԱՁԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 200 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. ԳԱՐԻԿ ՀԱԿՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով .

1. Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի «Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղքատաօգնություն և սանմաքրում» հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N200 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի օգոստոսի 18-ից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 138)

ԼՍԵՑԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 143 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկ. ԳԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան Համայնքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 18-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 143 որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2025 թվականի օգոստոսի 18-ից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 139)

ԼՍԵՑԻՆ

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 201
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկ. ԳԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի «Հրազդանի համայնքապետարանի «Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 201 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի օգոստոսի 18-ից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 140)

ԼՍԵՑԻՆ

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 202
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկ. ԳԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով .

1. Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի «Հրազդանի համայնքապետարանի վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N202 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 141)

ԼՍԵՑԻՆ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 203 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. ԳԱՐԻԿ ՀԱԿՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի «Հրազդանի համայնքապետարանի «Հուղարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների, հուշարձանների պահպանման և շահագործման» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 203 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 142)

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 220-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 220-Ն որոշման հավելվածը համայնքի ղեկավարի առաջարկությամբ շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-12

Դեմ-0

Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 143-Ն/

Ավագանու անդամներ՝

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԻ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԱՐՅԱՆ ԱԵՈՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ՍԱՖԱՐՅԱՆ



/Նիստն արձանագրեց՝

Ռ. Դանիելյանը

Ch. Raff

Կազմված է 15 օգոստոսի 2025թ.
և բաղկացած է 9 թերթից
Տպագրված է ընդամենը – օրինակ
Օրինակ -

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի օգոստոսի 15-ի
№ 135 որոշմամբ

Հրազդան համայնքի ղեկավար

Ս. Միքայելյան



ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից

«_____» _____ 2025թ.

գրանցման թիվ _____

ՀՎՀՀ _____

_____ աշխատակից

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՀՐԱԶԴԱՆԻ «ՄԱՅՐԱԿԱՆ ԱՆԿՅՈՒՆ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱԴԱՐՏԵՐ »
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱԶԴԱՆ 2025

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.«Հրազդանի «Մայրական անկյուն» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական հիմնական, այդ թվում՝ այլընտրանքային, հեղինակային և միջազգային կրթական ծրագիր՝ նախադպրոցական կրթության առնվազն մեկ տեսակով:

2.Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է ք. Հրազդան, Պուրակային 55:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1)հայերեն լրիվ՝ «Հրազդանի «Մայրական անկյուն» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2) հայերեն կրճատ՝ «Հրազդանի «Մայրական անկյուն» մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ.

3)ռուսերեն լրիվ՝ «Детский сад-ясли «Майракан анкюн» Раздана» общинная некоммерческая организация

4) ռուսերեն կրճատ՝ «Детский сад-ясли «Майракан анкюн» Раздана» ОНО .

5) անգլերեն լրիվ՝ «Hrazdan «Mayrakan ankyun» Nursery-Kindergarten» pre-school educational institution.

6) անգլերեն կրճատ՝ «Hrazdan «Mayrakan ankyun» Nursery-Kindergarten» PsEI:

6. Հաստատությունը ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7.Հաստատությունն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) և ներքին գնահատման հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

8. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

11.Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու կամ նախադպրոցական ծառայություններ մատուցելու միջոցով:

13. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի տարիքային և զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

14. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

15. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, սանի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ձևավորումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

16. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

17. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

18. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս ներառվում են՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած նորմերը:

19. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

- 2) մասնագիտական վերապատրաստումների և խորհրդատվությունների, ծնողական կրթությանը միտված դասընթացների և ծրագրերի իրականացում.
- 3) ճկուն ռեժիմով սանին սպասարկելու ծառայություններ.
- 4) սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք.
- 5) սաների կազմակերպված տրանսպորտային փոխադրումներ.
- 6) երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

20. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) և ուսումնական նյութերին համապատասխան:

21. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակն ապահովվում է ծրագրային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և նպատակաուղղված են յուրաքանչյուր սանի գիտելիքի, հմտությունների, դիրքորոշման և արժեքային համակարգի ձևավորմանն ու զարգացմանը:

22. Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

23. Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն, անկախ կազմակերպական-իրավական ձևից, իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով՝ ծնողի (սանի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (սանի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա:

24. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

25. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից և ավարտվում օգոստոսի 31-ին: Տարիքային խմբերում սաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

26. Տարիքային խմբերի ձևավորումը և սաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 5-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

27. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

28. Նախադպրոցական ուսումնական հաստատությունը տեսակով մտնում անկապարտեզ է՝ 0-6 տարեկանների ընդգրկմամբ:

29. Հաստատության աշխատանքային ռեժիմը, տարիքային խմբերի թիվը, հաստատությունում սաների մնալու տևողությունը սահմանվում է հիմնադրի, պետական և համայնքային հաստատությունների դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

30. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին:

31. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

32. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի կողմից, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ և համաճարակային միջոցառումների իրականացման, հիգիենիկ նորմատիվների պահպանման և սննդի որակի համար:

33. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ ենթարկվում են բժշկական զննության՝ օրենքով սահմանված կարգով:

4. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

34. Հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (սանի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), մասնաճյուղի ղեկավարը, դաստիարակը, դաստիարակի օգնականը, հոգեբանը, հատուկ մանկավարժը, սոցիալական մանկավարժը, ֆիզկուլտուրայի հրահանգիչը, երաժշտության դաստիարակը, բուժաշխատողը, լրացուցիչ կրթական ծառայության մանկավարժը և այլ մանկավարժական աշխատողներ:

35. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրենը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել հաստատության կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

36. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

37. Սանի և հաստատության աշխատողների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

38. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների անվանացանկին և պաշտոնների նկարագրերին:

39. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

40. Հաստատության կառավարումն իրականացնում է (իրականացնում են) հիմնադիրը (հիմնադիրները), պետական կառավարման կամ տարածքային կառավարման լիազոր

մարմինը, տնօրենը՝ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

41. Հաստատության հիմնադրի լիազորությունները սահմանված են «Նախադպրոցական կրթության մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով:

42. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

43. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և պաշտոնի նկարագրով իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

44. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ հաստիքի բացակայության դեպքում՝ բարձրագույն կրթություն և 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

45. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական և ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

46. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է օգոստոսի 20-ից 30-ը:

47. Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով:

48. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

49. Մանկավարժական խորհրդի աշխատանքը ղեկավարում է հաստատության տնօրենը, որն ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է:

50. Մանկավարժական խորհրդի նիստերն արձանագրում է մանկավարժական խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ ընտրված մշտական քարտուղարը, որի բացակայության դեպքում տվյալ նիստն արձանագրելու համար ընտրվում է նոր քարտուղար: Քարտուղարը պատասխանատու է մանկավարժական խորհրդի արձանագրությունների պատշաճ կազմման համար: Նիստի արձանագրությունը կազմվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում և ստորագրվում խորհրդի նախագահի ու քարտուղարի կողմից: Մանկավարժական խորհրդի նիստը հնարավորության կամ անհրաժեշտության դեպքում կարող է ձայնագրվել:

51. Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր՝

1) տնօրենի նախաձեռնությամբ.

2) մանկավարժական խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ.

3) լիազորված մարմնի նախաձեռնությամբ:

52. Մանկավարժական խորհրդի նիստերը բաց են:

53. Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցելու համար խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում են ծնողներ:

54. Հաստատության տնօրենը մանկավարժական խորհրդի նիստից առնվազն երեք օր առաջ մանկավարժական աշխատողներին գրավոր ծանուցմամբ (բացառությամբ

արտահերթ նիստերի) տեղեկացնում է մանկավարժական խորհրդի նիստի անցկացման տեղի, ժամի և օրակարգի մասին:

55. Մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ:

56. Մանկավարժական խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է մանկավարժական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

57. Մանկավարժական խորհրդի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած մանկավարժական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

58. Մանկավարժական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի փոխանցումն արգելվում է:

59. Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում՝

1) հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի.

2) օրվա կանոնակարգի և պարապմունքների բաշխման ցանկի, օգտագործվող ծրագրամեթոդական գրականության.

3) ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման տարբերակների.

4) սաների տարիքային խմբերի համակազմի վերաբերյալ և ներկայացնում տնօրենի հաստատմանը:

60. Հաստատության ծնողական խորհուրդը կազմավորվում է տարիքային խմբերի ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահն ընտրվում է փակ քվեարկությամբ, ծնողական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

61. Հաստատության ծնողական խորհրդի նախագահը խորհրդի նիստից առնվազն երեք օր առաջ խորհրդի անդամներին պատշաճ ծանուցմամբ տեղեկացնում է նիստի անցկացման տեղի, ժամի և օրակարգի մասին: Ծնողական խորհրդի որոշմամբ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ: Ծնողական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր:

62. Ծնողական խորհուրդների նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում է անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ:

63. Ծնողական խորհուրդների յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

64. Տարիքային խմբերի ծնողական խորհուրդների նիստերին մասնակցում են դաստիարակները, իսկ հաստատության ծնողական խորհրդի նիստերին՝ տնօրենը:

65. Ուսումնական տարվա ընթացքում, համաձայն հաստատության ուսումնադաստիարակչական տարեկան պլանի, հրավիրվում են ժողովներ՝ առնվազն չորս անգամ: Տնօրենի, ծնողական խորհուրդների և մանկավարժական աշխատողների նախաձեռնությամբ կարող են հրավիրվել արտահերթ ծնողական ժողովներ:

66. Հաստատության ծնողական խորհուրդը՝

1) մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնում է սաների առօրյայի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների կատարման գործում թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ.

2) աջակցում է հաստատությանը՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում.

3) լսում է տնօրենի հաղորդումը հաստատության գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին, ստանում ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները.

4) ամրապնդում է հաստատության և ծնողների միջև կապերը, մանկավարժական աշխատողների հետ ձևավորում և ծնողներին է ներկայացնում սաների դաստիարակության նկատմամբ միասնական պահանջներ.

5) մասնակցում է ծնողագուրկ և սոցիալապես անապահով սաներին նյութական օգնություն ցույց տալու աշխատանքներին.

6) ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը հաստատությունում.

7) ծնողներին ապահովում է տեղեկատվությամբ, կազմակերպում սեմինարներ, խորհրդատվություններ.

8) ծնողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին, պարտականություններին և օրենքով սահմանված պատասխանատվությանը.

9) համագործակցում է հաստատության մանկավարժական և այլ խորհուրդների հետ:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

67. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

68. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

69. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

70. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

71. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

72. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

73. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

74. Համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

75. Համայնքային հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

76. Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

77. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

78. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

79. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

80. Համայնքային հաստատությունների՝ պետական բյուջեից ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

81. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

82. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

83. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների հիմնադրումը, վերակազմակերպումը և լուծարումն իրականացվում են օրենքով սահմանված կարգով:



Հավելված 2.
Հրազդանի համայնքի ավագանու
2025 թվականի օգոստոսի 15-ի
N 135 որոշման

ՀԱՍՏԻՋԱՑՈՒՑԱԿ

«Հրազդանի «Մայրական անկյուն» մսուր-մանկապարտեզ » ՀՈԱԿ

Հ/հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5
1	Տնօրեն	1	250,000	250,000
2	Մեթոդիստ ,ուս. գծով տնօրենի տեղակալ	1	160,000	160,000
3	Գլխավոր հաշվապահ	1	140,000	140,000
4	Բուժքույր	1	105,000	105,000
5	Դաստիարակ	6.72	120,000	806,400
6	Դաստիարակի օգնական	6	110,000	660,000
7	Երաժշտության դաստիարակ	1.5	120,000	180,000
8	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	0.5	120,000	60,000
9	Հատուկ մանկավարժ (հոգեբան, լոգոպեդ, սուրդոմանկավարժ, օլիգոմանկավարժ, տիֆլոմանկավարժ)	0.5	120,000	60,000
10	Տնտեսվար	0.5	105,000	52,500
11	Պահեստապետ	0.5	105,000	52,500
12	Գործավար	0.75	115,000	86,250
13	Խոհարար	1	105,000	105,000
14	Խոհարարի օգնական	1	105,000	105,000
15	Օժանդակ բանվոր	0.5	105,000	52,500
16	Հավաքարար	0.5	105,000	52,500
17	Դռնապան	1	105,000	105,000
18	Պահակ	1	105,000	105,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	25.97		3,137,650

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի օգոստոսի 15 -ի
N 137 որոշման

Հավելված 2
Հրազդան համայնքի ավագանու
2016 թվականի հուլիսի 14-ի
N 58 որոշման

Բաղկացած է 4 էջից
Տպագրված է ընդամենը օրինակ
Օրինակ —

«Հաստատված է»
ՀՀ Կոտայքի մարզի
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի օգոստոսի 15 -ի
N 137 որոշմամբ
Համայնքի ղեկավար՝

Ս. Միքայելյան



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱՐԿԻ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)**

ՀՐԱԶԴԱՆ 2025

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն» /այսուհետ՝ Հիմնարկ/ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որը ստեղծվել և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով և սույն կանոնադրությամբ:
2. Հիմնարկը ստեղծվել է Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 14-ի N 58 որոշմամբ, նախկին անվանումը՝ «Աղբահանություն և սանմաքրում» հիմնարկ:
3. Հիմնարկի անվանումն է Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն» հիմնարկ:
4. Հիմնարկը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և հիմնարկի հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, գանձապետական հաշիվ: Իր նպատակների իրականացման, աշխատանքային գործունեության մեջ կիրառվող ձևերի և մեթոդների համապատասխան բովանդակության և ֆինանսատնտեսական գործունեության համար Հիմնարկը պատասխանատու է հիմնադրի առջև:
5. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համագործակցում է այլ հիմնարկների և կազմակերպությունների հետ՝ համաձայնեցնելով Հրազդանի համայնքապետարանի հետ:
6. Հիմնարկի իրավաբանական հասցեն է՝ ք. Հրազդան, Կենտրոն Սահմանադրության հրապարակ 1:

2. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՒԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- 1.1 Հիմնարկի գործունեության առարկա և հիմնական նպատակներ են հանդիսանում.
 1. Համայնքի ճանապարհների հարթեցում, բարեկարգում,
 2. Հրազդան համայնքի վարչական տարածքի ճանապարհների մաքրում ձյան շերտից և մերկասառույցից:
 3. Համայնքի սեփականություն հանդիսացող կոյուղու համակարգի սպասարկում և վերանորոգում:
 4. Համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգի սպասարկում և վերանորոգում:
 5. Եզրաքարերի վերանորոգում:
 6. Անձրևաջրերի հեռացման ցանցի սպասարկում:
 7. Սելավադարի սպասարկում:
 8. Համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների սպասարկում /ընթացիկ նորոգում/ :
 9. Համայնքի տարածքում ծառատունկի և ծառերի էպման աշխատանքների իրականացում:
- 1.2. Հիմնադիրը թույլ է տալիս Հիմնարկին իրականացնել համայնքային նշանակության ոչ տարանցիկ ճանապարհների սալապատման, խճապատման, երթևեկելի մասի և մայրերի բարեկարգման ձեռնարկափրական գործունեությունը:
- 1.3. Հիմնարկում սահմանված է վեցօրյա աշխատանքային շաբաթ՝ սպասարկման անձնակազմի համար և հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ վարչական անձնակազմի համար՝ համաձայն ներքին կարգապահական կանոնների:

3. ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

1. Հիմնարկի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը և նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հիմնարկի տնօրենը /այսուհետ՝ Տնօրեն/։
Հիմնադրին է պատկանում Հիմնարկի կառավարման և նրա գործունեության վերաբերյալ ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը։

2. Հիմնարկի Հիմնադրի լիազորություններն են՝

1) Հիմնարկի կառուցվածքի սահմանումը,

2) Հիմնարկի գործունեության կազմակերպման կամ դադարեցման մասին որոշման ընդունումը,

3) Հիմնարկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների ու լրացումների կատարումը։

4) Իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ։

3. Հիմնադիրը Հիմնարկի գործունեության նկատմամբ վերահսկողություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

4. Հիմնարկի բարձրագույն ղեկավար պաշտոնատար անձը Հիմնարկի տնօրենն է, որի նկատմամբ կարգապահական տույժ է կիրառում, պաշտոնին նշանակում և պաշտոնից ազատում է Հիմնադիրը՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։

5. Հիմնարկի Տնօրենը՝

1) կազմակերպում և ղեկավարում է Հիմնարկի աշխատանքները, ներկայացնում է Հիմնարկը պետական մարմիններում և այլ կազմակերպություններում, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,

2) պատասխանավորություն է կրում Հիմնարկի ամբողջ գործունեության, անհրաժեշտ պայմանների ստեղծման, կադրերի ճիշտ ընտրության, աշխատանքների արդյունավետ կազմակերպման, սանիտարահիգիենիկ վիճակի, կոլեկտիվում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ստեղծման համար,

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ տնօրինում է Հիմնարկի գույքը (այդ թվում՝ ֆինանսական միջոցները),

4) հաշվետու է Հիմնադրին,

5) աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Հիմնարկի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված խրախուսման և կարգապահական պատասխանավորության միջոցներ

6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, փալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում է դրանց կատարումը

7) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ։

6. Հիմնարկի աշխատակազմը պարտավոր է՝

1) աշխատանքները կատարել բարեխղճորեն և բավարարել համապատասխան

աշխատանքների որակը,

2) կատարվող աշխատանքների ընթացքում պահպանել անվտանգության կանոնները:

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Հիմնարկի աշխատանքային գործունեության հիմնական ֆինանսական միջոցներ են համայնքապետարանի բյուջեային հատկացումները:

2. Հիմնարկի գույքը ձևավորվում է Հիմնադրի կողմից նրա տիրապետմանը, տնօրինմանը և օգտագործմանը հանձնված /ամրացված / գույքից, որը հաշվառվում է նրա հաշվեկշռում: Հիմնադիրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հետ վերցնել իր կողմից Հիմնարկին հանձնված գույքը:

3. Հիմնարկն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան օգտագործել, տիրապետել և տնօրինել իրեն հանձնված գույքը:

4. Հիմնարկը պատասխանատվություն է կրում իրեն ամրացված գույքի և միջոցների պահպանման և արդյունավետ օգտագործման համար:

5. Հիմնարկի լուծարման դեպքում նրան ամրացված գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

6. Հիմնարկի լրացուցիչ ֆինանսական աղբյուրներն են՝
- բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ թույլատրելի այլ գործունեությունից ստացված ֆինանսական և նյութական միջոցները:

7. Հիմնարկը սահմանված կարգով հաշվապահական հաշվառում կատարում է ինքնուրույն և հաշվետվություն է ներկայացնում համայնքապետարանի ֆինանսական բաժնին:

5. ՀԻՄՆԱՐԿԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Հիմնարկը լուծարվում կամ վերակազմակերպվում է Հրազդան համայնքի ավագանու որոշումներով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի օգոստոսի 15-ի
N 138 որոշման

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 10 -ի
N 200 որոշման

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՋԱՑՈՒՑԱԿ

Հրազդանի համայնքապետարանի <<Կոմունալ տնտեսություն>> հիմնարկի հաստիքացուցակը
և պաշտոնային դրույքաչափը

Աշխատակիցների թվաքանակը՝ 70

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	<<Կոմունալ տնտեսություն>> հիմնարկ	Տնօրեն	1	407,000	407,000
1		Տնօրենի օգնական	1	280,000	280,000
2		Գլխավոր հաշվապահ	1	280,000	280,000
3		Հաշվապահ	1	105,000	105,000
4		Մարդկային ռեսուրսների մասնագետ	1	280,000	280,000
5		Մեքենա-մեխանիզմների պա - տասխանատու	1	345,000	345,000
6		Գլխավոր մասնագետ	2	294,000	588,000
7		Գործավար	1	195,000	195,000
8		Գործավար	6	195,000	1,170,000
9		Մասնագետ	4	328,000	1,312,000
10		Մեխանիզատոր / հատուկ տեխնիկա/	1	250,000	250,000
11		Մեխանիզատոր /ավտոգրեյդեր/	3	250,000	750,000
12		Մեխանիզատոր /քելոռուա/	6	130,000	780,000
13		Մեխանիզատոր /սեզոնային/	10	160,000	1,600,000
14		Վարորդ	6	160,000	960,000
15		Բանվոր	1	160,000	160,000
16		Մաքրումի	4	130,000	520,000
17		Բանվոր /ծառատունկի և ծառերի էտման/	3	105,000	315,000
18		Բանվոր/ոռոգման/ սեզոնային	1	333,000	333,000
19		Ավագ կոյուղագործ	3	208,000	624,000
20		Կոյուղագործ	3	350,000	1,050,000
21		Ներքին հարդարող /մայլար/	1	250,000	250,000
22		Սանտեխնիկ	1	250,000	250,000
23		Էլեկտրիկ	1	160,000	160,000
24		Սղոցավար	1	160,000	160,000
25		Ավտոփականագործ	1	200,000	200,000
26		Ավտոէլեկտրիկ	1	160,000	160,000
27		Պահեստապետ	2	105,000	210,000
28		Պահակ	1	250,000	250,000
29		Շարժիչագործ /մատորիստ/	1	150,000	150,000
30		Էլ. եռակցող			
	Ընդամենը՝		70		14,094,000

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի օգոստոսի 15-ի
N 139 որոշման

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2009 թվականի դեկտեմբերի 18-ի
N 143 որոշման

Բաղկացած է 6 էջից
Տպագրված է ընդամենը օրինակ
Օրինակ

«Հաստատված է»
ՀՀ Կոտայքի մարզի
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի օգոստոսի 15-ի
N 139 որոշմամբ

Համայնքի ղեկավար՝
Ս. Միքայելյան



ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց ռեգիստրի
գործակալության կողմից

13 հունվար 2010թ.
Գրանցման համարը՝ 33.210.01965
ՀՎՀՀ՝ 03018844

Գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը

գրանցվել է _____ 2025թ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<ՄԱՔՈՒՐ ՀՐԱԶԴԱՆ>>
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ՀՐԱԶԴԱՆ 2025

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն այսուհետ՝ Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, ոչ առևտրային կազմակերպություն է:
2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, Քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:
3. Կազմակերպության հիմնադիրը Հրազդան համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս Հրազդան համայնքի ավագանու (այսուհետ՝ Հիմնադիր), իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված համայնքային մարմին, հանդիսանում է Հրազդան համայնքի ղեկավարը:
4. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
